| | |
|---|---|
| ՊԱՇՏՈՆ | Կորպորատիվ պրոդուկտների առաջատար մենեջեր / PO |
| ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԳՐԱՖԻԿ | Լրիվ դրույք |
| ԱՇԽԱՏԱՆՔԻ ՎԱՅՐ | ք. Երևան, ՀՀ |
| ԱՇԽԱՏԱՆՔԸ ՍԿՍԵԼՈՒ ԱՄՍԱԹԻՎ | Հնարավորինս շուտ |
| ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՍԿԶԲՆԱԺԱՄԿԵՏ | 23/01/2025թ. |
| ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՎԵՐՋՆԱԺԱՄԿԵՏ | 07/02/2025թ. |
| ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԺԱՄԿԵՏ | Երկարաժամկետ՝ 3 ամիս փորձաշրջանով |

«ԱյԴի Բանկ» ՓԲԸ-ն փնտրում է մոտիվացված և խելացի թիմի անդամի, ով կմիանա Բանկին որպես Կորպորատիվ պրոդուկտների առաջատար մենեջեր / Product owner:

## ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ

- Կորպորատիվ հաճախորդների հեռահար սպասարկման հարթակների՝ Ինտերնետ բանկինգ/մոբայլ բանկինգ, ֆունկցիոնալի բարելավմանը, նոր ֆունկցիոնալի ներդրմանն ուղղված նախագծերի նախաձեռնում:
- Նոր պրոդուկտների ներդրման առաջարկների ներկայացում, պրոդուկտի ներդրում՝ համաձայն Բանկում գործող ընթացակարգերի պահանջների:
- Իրեն կցված պրոդուկտի/պրոդուկտների խմբի մասով ամբողջական ցիկլի ապահովում՝ առաջարկից՝ մինչև ներդրված պրոդուկտների վաճառքի ծավալների ուսումնասիրություն և հաշվետվությունների պատրաստում՝ ըստ անհրաժեշտության:
- Վաճառքի, ձևակերպման և հետսպասարկման գործընթացների մշակում՝ ներքին ակտերի, կարգերի, ընթացակարգերի տեսքով:
- Գործընթացների ավտոմատացմանն ուղղված միջոցառումների իրականացում և ներկայացում համապատասխան իրավասու մարմիններին, ծրագրային լուծումների թեստավորում, խնդիրների բացահայտում և դրանց լուծմանն ուղղված հետադարձ կապի ապահովում:

## ՊԱՀԱՆՋՎՈՂ ՈՐԱԿԱՎՈՐՈՒՄՆԵՐ

- Բարձրագույն կրթություն
- Նվազագույնը 2 տարվա համապատասխան աշխատանքային փորձ
- Բանկային գործունեության, բանկային պրոդուկտների և ծառայությունների իմացություն
- Նախագծերի կառավարման որակավորումը կդիտվի որպես առավելություն
- Բանկային օրենսդրության իմացություն
- Հայերենի և անգլերենի լավ իմացություն, ռուսերենով ազատ հաղորդակցման կարողություն
- Համակարգչային գիտելիքներ՝ MS Office ծրագրային փաթեթի լավ իմացություն, հատկապես Excel և PowerPoint,
- Կազմակերպչական հմտություններ և ժամանակի արդյունավետ կառավարում
- Հաղորդակցման հմտություններ
- Ճշտապահություն և պատասխանատվության զգացում
- Գաղտնապահություն

- Խնդիրների արագ և արդյունավետ լուծման կարողություններ, միաժամանակ մի քանի առաջադրանք կատարելու կարողություն
- Փոփոխություններին արագ արձագանքելու կարողություն
- Առաջնային և երկրորդական հանձնարարությունները տարբերակելու կարողություն
- Ճկունություն, աշխատասիրություն
- Մանրուքների նկատմամբ ուշադրություն
- Թիմում արդյունավետ աշխատելու ունակություն
- Գործարար էթիկայի նորմերի իմացություն և դրանց կիրառում

ԼՐԱՑՈՒՑԻՉ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ
Փորձաշրջանի բարեհաջող ավարտից հետո Բանկն իր աշխատակիցներին առաջարկում է արտոնությունների լայն փաթեթ, մասնավորապես, բժշկական ապահովագրություն, պարգևատրման ճկուն համակարգ, սպորտային ակումբների ծառայություններից օգտվելու կորպորատիվ փաթեթ, արտոնյալ պայմաններով բանկային ծառայություններ և այլն:

ԴԻՄԵԼՈՒ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԸ
Եթե ձեր գիտելիքները, մասնագիտական փորձն և որակավորումները համապատասխանում են վերը նշված հաստիքի պահանջներին և և դուք հետաքրքրված եք միանալու ԱյԴի Բանկի թիմին՝ անցեք հետևյալ հղումով https://idbank.bamboohr.com/careers/102 : Հարցազրույցի կիրավիրվեն նախնական ընտրությունը անցած դիմորդները

ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ
«ԱյԴի Բանկ»-ը հիմնադրվել է 1990թ.-ին «Անելիք Բանկ» անվանումով, իսկ 2018թ. Հունիսի 4-ից Բանկը ներկայանում է «ԱյԴի Բանկ» ՓԲԸ անվանումով:
«ԱյԴի Բանկ»-ի առաքելությունն է հաճախորդների համար լինել առաջին ընտրության լավագույն նորար Բանկ՝ ՝ հաճախորդներին տրամադրելով անհատական մոտեցմամբ արդիական թվային լուծումներ: Բանկի մասին հավելյալ տեղեկատվության համար կարող եք այցելել Բանկի պաշտոնական կայքէջ https://www.idbank.am/: